ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. հունիսի 3-6-ը Իսիկ Կուլի շրջանի Բայետ գյուղ (Ղրղզստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Սարգիս Բաբայան - Ներքին անվտանգության վարչության խորհրդական:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղրղզստանի Հանրապետություն, Իսիկ Կուլի շրջանի Բայետ գյուղ, 2025թ. հունիսի 3-6-ը:

3. Հրավիրող կողմը.

Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 50-րդ և ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 80-րդ նիստերին մասնակցություն:

5. Քննարկված թեմաները.

Միավորված կոլեգիայի նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել է թվով 24 որոշում, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին, մասնավորապես՝ տեղորոշման կապարակնիքների կիրառման առանձնահատկություններին, անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման ժամանակ էլեկտրոնային ուղևորային հայտարարագրերի լրացմանը, ընդհանուր գործընթացների շրջանակներում ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների տեղեկատվական փոխգործակցությանը, առանձին տեսակի ապրանքների մաքսային հայտարարագրման վերլուծությանը, ինչպես նաև ԵԱՏՄ արտաքին տնտեսական

գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան որոշ ապրանքների դասակարգմանն ու կեղծ տարանցման կանխարգելմանն առնչվող մի շարք հարցերին:

ԱՊՀ ՄԾՂԽ նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել է թվով 9 որոշում, այդ թվում՝ էլեկտրոմոբիլների լիցքավորիչների նկատմամբ համապատասխան մաքսային գործառնությունների իրականացմանը, սահմանային անցման կետերում սպասման գոտիների գործունեության իրավակիրառ պրակտիկային, էլեկտրոնային շարժիչով և ներքին այրման շարժիչով հագեցած թեթև մարդատար ավտոմեքենաների նույնականացման փորձի փոխանակմանը, ինչպես նաև ապրանքների դասակարգման հարցերով աշխատանքային խմբի ստեղծմանն առնչվող մի շարք հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստերի ընթացքում տեղի է ունեցել նաև հոբելյանական հուշամեդալներով պարգևատրում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել է թվով 24 որոշում,
- ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել է թվով 9 որոշում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Որոշում է կայացվել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի հաջորդ՝ 51-րդ նիստը և Անկախ պետությունների համագործակցության մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի հաջորդ՝ 81-րդ նիստերն անցկացնել Տաջիկստանի Հանրապետությունում՝ 2025 թվականի սեպտեմբերին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Սարգիս Բաբայան

09.06.2025թ.